



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

03.09.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2019/137

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2019թ. թիվ 26/26-1/13082-2019 գրությամբ «Լենտեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 29.07.2019թ. թիվ 20/592 գրության հիման վրա, 06.08.2019թ. թիվ 26/26-1/13082-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լենտեքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լենտեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լենտեքս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Լենտեքս» ՍՊԸ-ն ԱԱԾ-ի կողմից հայտարարված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊԶԲ-1/19 հանդերձանք և անկողնային պարագաներ ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը զբաղեցրել է առաջին տեղ:

Ընթացակարգին մասնակցելու պայմաններից մեկը եղել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 11.07.2019թ., հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայությունը: Միաժամանակ նաև օրենքը թույլ է տալիս, որ հայտ կարող են ներկայացնել հիսուն հազար դրամը գերազանցող պարտավորություն ունեցող կազմակերպությունները: «Լենտեքս» ՍՊԸ-ն օգտվել է taxservice.am կայքի Ընկերության անձնական գրասենյակ պատուհանից հարկային պարտավորությունների մասով անձնական հաշվի քաղվածքում արտացոլվել է 25 967 ՀՀ դրամ հարկայի պարտավորություն, որը վճարվել է հայտը ներկայացնելուց մի քանի ժամ առաջ:

Ընկերությունը հատնել է, որ 11.07.2019թ դրությամբ հարկային պարտավորությունները 0 է, իսկ դեբիտորական մնացորդը ԱԱՀ-ի մասով 27 282 555 ՀՀ դրամ է, դրոշմանիշային վճարի գծով՝ 102 000 ՀՀ դրամ:

Ամփոփելով, Ընկերությունը Գնումների հետ կապված բոլորքներ քննող անձին խնդրել է չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ Ընկերությունը ունի շուրջ 400 աշխատակից և գտնվում է խոշոր հարկատուների ցանկում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/137 ընթացակարգի շրջանակներում 16.08.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.07.2019թ. թիվ 20/592 գրությամբ ներկայացրել է «Լենտեքս» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/137 ընթացակարգի

շրջանակներում 16.08.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/137 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/137 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊԶԲ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ԵՎ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով **11.07.2019թ.** հայտ է ներկայացրել «Լենտեքս» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով՝ ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 6-րդ չափաբաժնի մասով կազմում է 1 750 000 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնի մասով՝ 1 160 000 ՀՀ դրամ և 9-րդ չափաբաժնի մասով՝ 1 470 000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լենտեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.07.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ **«Լենտեքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 25 967 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:**

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2019թ. ժամը նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

6. Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «Ինեկորբանկ» ՓԲԸ-ի 11.07.2019թ. թիվ 101 վճարման հանձնարարականը, որի համաձայն՝ «Լենտեքս» ՍՊԸ-ի կողմից 11.07.2019թ. «900008000490» գանձապետական հաշվեհամարին իրականացվել է 26 000 ՀՀ դրամ գումարի վճարում:

7. Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՊԵԿ-ի կողմից 23.07.2019թ. տրամադրված թիվ 3921 տեղեկանքը, որի համաձայն՝ «Լենտեքս» ՍՊԸ-ն 12.07.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.08.2019թ. թիվ 26/26-1/13082-2019 գրությունը, «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի 29.07.2019թ. թիվ 20/592 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում են հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊԶԲ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ԵՎ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **11.07.2019թ.** հայտ է ներկայացրել «Լենտեքս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով՝ ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 6-րդ չափաբաժնի մասով կազմում է 1 750 000 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնի մասով՝ 1 160 000 ՀՀ դրամ և 9-րդ չափաբաժնի մասով՝ 1 470 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լենտեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ

կետի հիման վրա 19.07.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ **«Լենտեքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 25 967 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2019թ. ժամը նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Լենտեքս» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ԵՎ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը:

Արձանագրում եմ, որ ՍՑ-ՆԳ-2019/137 ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է «Ինելկոբանկ» ՓԲԸ-ի 11.07.2019թ. թիվ 101 վճարման հանձնարարականը, որի համաձայն՝ «Լենտեքս»

ՍՊԸ-ի կողմից 11.07.2019թ. «900008000490» գանձապետական հաշվեհամարին իրականացվել է 26 000 ՀՀ դրամ գումարի վճարում:

Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՊԵԿ-ի կողմից 23.07.2019թ. տրամադրված թիվ 3921 տեղեկանքը, որի համաձայն՝ «Լենտեքս» ՍՊԸ-ն 12.07.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Լենտեքս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու նույն օրը՝ 11.07.2019թ. կատարվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած պարտավորությունը՝ համապատասխան գանձապետական հաշվեհամարին վճարելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրված պարտավորության չափը **(25 967 դրամ)** գերազանցող գումար **(26 000 ՀՀ դրամ)**, որի մասին վկայում է նաև ՊԵԿ-ի կողմից 23.07.2019թ. տրամադրված թիվ 3921 տեղեկանքը, որի համաձայն՝ «Լենտեքս» ՍՊԸ-ն 12.07.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ***հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:***

Նույն օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Այսպիսով, վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ «Լենտեքս» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊԶԲ-1/19-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ԵՎ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, ուստի Ընկերությանը գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.08.2019թ. թիվ 26/26-1/13082-2019 գրությամբ «Լենտեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ